

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՅՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալության խոսք	3
Հետազոտության մեթոդաբանություն	4
Հետազոտության արդյունքների հակիրճ պատկերը	5
Հետազոտության արդյունքների վերլուծություն	8
Մաս I. Ուսանողների տեղեկացվածությունը կրեդիտային համակարգից	8
Մաս II. Ուսանողների կարծիքը գնահատման համակարգի վերաբերյալ	13
Մաս III. Ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա ազդող հիմնական գործոնները	20
Մաս IV. Դասավանդում-ուսումնառում գործընթացը՝ ուսանողների աչքերով	27
Հավելված 1 Հարցաթերթ	35
Հավելված 2. 1. Հետազոտության ընտրանքի մանրամասն նկարագրություն	42
Հավելված 2. 2. Բուհերի ընտրությունը՝ ըստ մարզերի և ըստ «պետական», «ոչ պետական», «միջպետական» կարգավիճակի	46
Հավելված 2. 3. Հարցված ուսանողների թիվը բուհերում	47
Հավելված 2. 4. Ընտրանքով որոշված ուսանողների թվի բաշխումը՝ ըստ բուհերի, սեռի, կուրսի և մասնագիտական ուղղվածության	48
Հավելված 3. Հարցաթերթի հարցերի ստացած պատասխանները ներկայացնող աղյուսակները	50

* * *

2011 թվականին փետրվար-մարտ ամիսներին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) նախաձեռնությամբ մեկնարկեց «Ուսանողության Ձայն» ծրագիրը, որի առաջնահերթ նպատակներն են՝ հիմնել ուսանողական ցանց, վերհանել ուսանողներին հուզող հիմնախնդիրները, հետազոտել և բարձրաձայնել դրանք: Ուստի կազմվեց ծրագրի աշխատանքային խումբը սոցիոլոգ ուսանողներից որպեսզի աշխատանքի կազմակերպման հիմքում ընկած լինի սոցիոլոգիական էթիկան: Անցկացվեցին մի շարք խմբային քննարկումներ տարբեր բուհերի ուսանողների հետ, որպեսզի առանձնացվեն ուսանողներին առավել հուզող հիմնախնդիրները: Դրանք, ընդհանուր առմամբ, վերաբերում էին ուսանողների շրջանում կրեդիտային համակարգի և գնահատման սանդղակի նույնացմանը, ուսանողների բուհ ընդունվելու նպատակներին և սովորելու մոտիվացիային, ինչպես նաև դասավանդում-ուսումնառություն գործընթացի տարբեր ասպեկտներին:

Ահա այս խնդիրները պարզելուն էլ ուղղված է եղել տվյալ հետազոտությունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Հետազոտության մշակման և իրականացման ողջ ընթացքը հնարավոր չէր լինի առանց այն մեծ օգնության, որ մենք ստացել ենք տարբեր մարդկանցից և կազմակերպություններից:

Այդ առիթով առաջնահերթ շնորհակալություն ենք ցանկանում հայտնել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին (Ո Ա Ա Կ) «Ուսանողության Ձայն» ծրագրին անընդհատ ցուցաբերված մասնագիտական, ինչպես նաև նյութական աջակցության համար; IPSC քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտին՝ սոցիոլոգիական հետազոտության անցկացման հարցում խորհուրդների և նյութական աջակցության համար; TEMPUS DIUS ծրագրին՝ հարցաթերթերի տպագրումը հնարավոր դարձնելու համար:

Ինչպես նաև առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր ուսանողներին, ովքեր մեծապես աջակցել են հետազոտության իրագործման բոլոր փուլերում:

Հ ԵՏԱԶ Ո ՏՈ ԻԹՅԱՆ Մ ԵԹՈՂ ԱԲԱՆ Ո ԻԹՅՈ ԻՆ

Հետազոտության առջև դրվող խնդիրները հետևյալն են՝

- պարզել, թե որքանով են ուսանողները տեղեկացված կրեդիտային համակարգից՝ կրեդիտների օգտագործման՝ կուտակման (1) և փոխանցման (2), շարժունության (3) և այս ամենի փոխկապակցվածության (4) շուրջ,
- վերհանել ուսանողների կարծիքը գնահատման համակարգի վերաբերյալ՝ գնահատման առաքելության և հիմնական սկզբունքների (1), գնահատման վրա ազդող գործոնների և փուլայնության (2), գնահատման օբյեկտիվության (3) վերաբերյալ¹,
- պարզել ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա ազդող հիմնական գործոնները,
- պարզել ուսանողների մոտեցումները և դիրքորոշումները՝
 - դասախոսի կերպարի, դասախոս-ուսանող փոխհարաբերությունների,
 - դասավանդման մեթոդ/ների,
 - ուսանողներին տրամադրվող ուսումնական նյութ/երի,
 - դասընթացի կայացման համար անհրաժեշտ ռեսուրս/ների,
 - ուսանող-ուսանող փոխհարաբերությունների նկատմամբ:

Այսպիսով հետազոտությունն ուղղված էր ուսումնասիրելու ուսանողների կարծիքը վերոնշյալ թեմաների շուրջ և պարզելու, թե որքանով են տեղայնացվել այդ փոփոխությունները ՀՀ բարձրագույն կրթական հաստատություններում:

Հետազոտության հիմնական մեթոդն է հարցաթերթիկային հարցումը: Ընտրանքի ծավալը հաշվարկվել է 95% ճշտությամբ, [-4; +4] վստահության միջակայքով²: Մահմանային սխալը կազմել է ±4, 11:

¹ Տվյալ հետազոտության շրջանակներում օգտագործելով «գնահատման նպատակ և հիմնական սկզբունքներ», «գնահատման վրա ազդող գործոններ և փուլայնություն», «գնահատման օբյեկտիվություն» հասկացությունները՝ մենք հղվում ենք դրանց ոչ թե գիտական, այլ բուն բառացի նշանակություններին, որոնք հետազայում մանրամասնվում են:

² Մանրամասները կարող եք գտնել Հավելված 2-ում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՊԱՏԿԵՐԸ

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ,
որ

Հետևություն 1. Ուսանողները հիմնականում տեղեկացված չեն, թե ինչ է իրենից ներկայացնում կրեդիտային համակարգը, ինչ առաքելություն ունի, որի պատճառ կարող է հանդիսանալ բուհում տեղեկատվության տարածման ուղիները: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ուսանողները կրեդիտային համակարգը շփոթում են գնահատման սանդղակի հետ, առաջինի մասին պատկերացումները ուսանողների մոտ վերագրվում են երկրորդի շոշափելի դրսևորումներին, այսինքն՝ կրեդիտային համակարգի հետ կապված ապատեղեկացվածությունը ոչ միայն պատճառ է տեղեկատվության տարածման ուղիների թերի գործառնության, այլև շոշափելի դրսևորումների գրեթե բացակայության:

Հետևություն
ն 2.

- Ուսանողների համար գնահատականը չի կրում բովանդակային արժեք, այլ հանդես է գալիս որպես պիտակավորող հանգամանք:
- ՀՀ ուսանողության շրջանում գնահատման փուլայնությունը ասոցացվում է միայն վերջնական միավորի կուտակման փուլերի հետ, որոնք մեծամասամբ համապատասխանում են ֆիզիկական ներկայության, միջանկյալների և վերջնական քննությունների արդյունքում ստացած միավորների գումարին:
- Մակայն գնահատման՝ որպես պիտակի ընկալման հիմքում ընկած է նաև անորոշությունը: Տարբեր խմբային քննարկումների ժամանակ ուսանողները նշում էին, որ շատ դեպքերում չեն հասկանում, թե ինչի հիման վրա է դասախոսը նշանակում այս կամ այն գնահատականը (միավորը): Այս պատճառով հարցաթերում հարցեր ներգրավվեցին նաև այն մասին, թե ուսանողների կարծիքով «որքանով են տարբեր գործոններ ազդում վերջնական գնահատման վրա»:
-
- Այս պատասխանները բավականին հետաքրքիր են այն տեսանկյունից, որ առաջին 3 տարբերակները, ինչպես նաև հաճախումները այն չափանիշներն են,

որոնք ենթադրվում է, որ պետք է օբյեկտիվորեն պայմանավորեն գնահատակնր, մինչդեռ

Ուսանողի ձգտումը ուսման նկատմամբ և ուսանողի նկատմամբ դասառսի անձնական վերաբերմունքը ավելի շուտ սուբյեկտիվ բնույթ են կրում, սակայն պատասխանների բաշխման մեջ նույնպես բարձր տոկոս են կազմում: Առավել հատկանշական է այն, որ բավականին լուրջ ազդեցության գործոններ են համարվում նաև այնպիսի կաշառքը, ծնողների դիրքը, ծանոթը, որոնք օրենքով դատապարտվում են:

- Թեպետ ուսանողները նշում են, որ վերջնական գնահատման վրա մեծապես ազդում է դասախոսի անձնական վերաբերմունքը ուսանողի նկատմամբ, այնուամենայնիվ նրանք որակում են դասախոսի իրականացրած գնահատումը հիմնականում որպես օբյեկտիվ: Դա ավելի շուտ խոսում է ոչ այնքան գնահատման «օբյեկտիվ» լինելու, որքան դասախոսների նկատմամբ ուսանողների դրական դիրքորոշման մասին:

Հետևություն 3.

- Ուսանողները դասավանդում-ուսումնառություն գործընթացում առավել շատ կարիք ունեն գործնական գիտելիքների, ինչպես նաև անհատական ուշադրության և ուղղորդման:
- Շատ դեպքերում բուհի սահմաններում ուսանողները ապահովված չեն ուսումնառությանը անհրաժեշտ լաբորատոր պայմաններով, հարուստ մասնագիտական գրականությամբ, ինտերնետով:
- Գնահատումը և գնահատականը այն հիմնական գործոններն են, որոնք ազդում են ուսանողների սովորելու ցանկության նվազման վրա:

Հետևություն 4.

- Գրավոր դասախոսության մեթոդը, լինելով առավել օգտագործվողը, նպաստում է ուսանողների օտարմանը ինքնուրույնությունից և հոգեբանական կախվածության մեջ է դնում նախապես ունեցած գրառումներից (գրավոր դասախոսությունից):
- Երբ դասավանդվող նյութը հնացած է, գործնականում՝ ոչ կիրառելի, և պարտադրվում է ուսանողներին, վերջիններս ցուցաբերում են ցածր մասնակցություն դասին և ավելի շուտ հակված են ապահովելու ֆիզիկական ներկայություն: Այնինչ, ուսանողները դասի ժամանակ ակտիվ մասնակցում են քննարկմանը, երբ նյութը կիրառական և արդիական է, և ուսանողն ու դասախոսը համագործակցաբար են աշխատում:

- Ուսանողներն ընդունվում են բուհ սովորելու, մասնագետ դառնալու ցանկությամբ, սակայն ընդունվելուց հետո հայտնվում են մի իրավիճակում, որտեղ գրավոր դասախոսությունը դառնում է գնահատական ստանալու միջոց: Դասախոսների կողմից հաճախ չեն ստանում անհատական մոտեցում, չեն ապահովվում անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ և լաբորատոր/հետազոտական հնարավորություններով, և գրեթե բացակայում են գործնական գիտելիքներ: Նման միջավայրը նպաստում է, որպեսզի ուսանողների սովորելու մոտիվացիան նվազի և նրանք սկսեն սովորել դիպլոմ ստանալու համար:


ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾ ՈՒԹՅՈՒՆ

Մաս I.

Ուսանողների տեղեկացվածությունը կրեդիտային համակարգից

Հետազոտության առաջ դրված խնդիրներից մեկն է պարզել, թե որքանով են ուսանողները տեղեկացված կրեդիտային համակարգից՝ կրեդիտների օգտագործման՝ կուտակման (1) և փոխանցման (2), շարժունության (3) և այս ամենի փոխկապակցվածության (4) շուրջ:

Անդրադառնանք հարցաթերում ներառված այն հարցերին, որոնք վերաբերում են այս խնդրին: Այն հարցին, թե «ինչ է իրենից ներկայացնում կրեդիտային համակարգը», ուսանողները պատասխանել են՝




Հարցը եղել է բաց, այսինքն՝ չի ունեցել պատասխանի նախապես տրված տարբերակներ. ուսանողներն իրենք են գրել «կրեդիտային համակարգ» հասկացությանը վերաբերող իրենց պատկերացումների մասին: Ընդհանուր առմամբ, պատասխաններից երևում է, որ ուսանողների մեծ մասը տեղյակ չէ, թե ինչ է իրենից ներկայացնում կրեդիտային համակարգը: Առավել հաճախ հանդիպում էր այն մոտեցումը, որ կրեդիտային համակարգը գնահատման սանդղակ է: Եվ, ինչպես ցույց տվեցին խմբային քննարկումները, ուսանողները «կրեդիտ»-ը շփոթում են գնահատման սանդղակի միավորների հետ:

«Երբ կրեդիտային համակարգը ճիշտ ընդունվի, կոլեկտիվում կհարգվի այն դասախոսը, ում ուսանողների կրեդիտները ավելի բարձր են», -խմբային քննարկմանը մասնակից մի ուսանողի պատկերացումները «կրեդիտի» մասին:

Վերադառնալով Գծապատկեր 1-ին, նկատենք, որ վերջին երեք պատասխանները ունեն նկարագրողական բնույթ, իսկ դրանցից երկուսը արտահայտում են ուսանողի էմոցիոնալ գնահատականը, այսինքն՝ գուցե ուսանողները չեն կարողանում նկարագրել համակարգը և փոխարենը նշում են իրենց վերաբերմունքը համակարգի նկատմամբ:

Ուսանողների շուրջ 21%-ը նշել է, որ իրենք տեղեկացված չեն կրեդիտային համակարգից, և միայն 9,9%-ն է տվել մոտավոր սահմանում (նշել են շարժունության, կրեդիտների կուտակման, ավարտական վկայականների ելքոպական ճանաչում ունենալու մասին և այլն):

Հարցաթերթում կային հարցեր նաև կրեդիտային համակարգի դրական և բացասական կողմերի վերաբերյալ (պատասխանները՝ Գծապատկեր 2 և 3-ում):




Գծապատկեր 1-ից պարզ դարձավ, որ ուսանողները այն շփոթում են գնահատման սանդղակի հետ: Այսպիսով դրական և բացասական կողմերը նշելիս շատ ուսանողներ


հավանաբար նշել են «գնահատման սանդղակի» դրական և բացասական կողմերը: Հարցերը նույնպես եղել են բաց:

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, ուսանողների ավելի քան 50%-ը, նշելով կրեդիտային համակարգի բացասական կողմերը, դարձյալ անդրադարձել է գնահատման երևույթին՝ «հեշտացնում է գնահատական ստանալը» (27, 6%) և «նպաստում է գնահատման օբյեկտիվությանը» (24%): Շուրջ 6%-ը նշել է «ռոտացիա, մրցակցություն» պատասխանը:

Ուսանողների 5, 8%-ը նշել է, որ կրեդիտային համակարգը դրդում է ինքնուրույնության:




Այն հարցին, թե «որոնք են կրեդիտային համակարգի բացասական կողմերը», ուսանողների մի մասը, կրկին, անդրադարձել են գնահատման համակարգին: Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ ուսանողները ծանոթ են կրեդիտային համակարգին որպես գնահատման համակարգի:



Իսկ թե ինչպիսի տեղեկատվություն են ուսանողները ստանում բուհերում և որքանով են ուսանողները բավարարված այդ տեղեկատվությամբ (Գծապատկեր 4), ուսանողները նշել են, որ իրենց բավականաչափ տեղեկատվություն է տրամադրվում կրեդիտներ կուտակելու և փոխանցելու վերաբերյալ, և իրենք բավարարված են այդ տեղեկատվությամբ, սակայն, ուսանողները նաև նշել են, որ իրենք այդքան էլ բավարարված չեն ֆակուլտետից ֆակուլտետ, բուհից բուհ, արտասահմանում սովորելու մասին տեղեկատվությամբ:

Այսպիսով, եթե կրեդիտների կուտակումը և փոխանցումը նպատակ են հետապնդում ապահովել շարժունություն՝ ֆակուլտետից ֆակուլտետ, բուհից բուհ, մի երկրից մյուսը, ապա դրանց վերաբերյալ տեղեկատվությունն էլ պետք է ուսանողին մատուցվի միահյուսված կերպով: Այնինչ ուսանողները տեղեկացված են կրեդիտների կուտակումից և փոխանցումից, սակայն բավարարված չեն շարժունության վերաբերյալ բուհում իրենց տրամադրված տեղեկատվությամբ, եզրակացնում ենք, որ ուսանողների մոտ բացակայում է կրեդիտային համակարգի վերաբերյալ համակարգային պատկերացումը:



Մեկ այլ հետաքրքիր հանգամանք է Գծապատկեր 5-ում ներկայացված արդյունքները: Այն հարցին՝ «արդյոք իրենց բուհում ներդրված է կրեդիտային համակարգ», ուսանողների 6%-ը նշել է «Ոչ» պատասխանը, այն դեպքում, որ բոլոր 17 բուհերում համակարգը փաստացիորեն ներդրված է:

Այս ամենը վկայում է այն մասին, որ, չնայած ՀՀ անդամակցում է Բոլոնիայի գործընթացին արդեն մոտ 7 տարի, հայաստանյան ուսանողների 6 %-ը առհասարակ տեղյակ չէ կրեդիտային համակարգի մասին, իսկ այն ուսանողները, ովքեր կարծում են, թե

տեղեկացված են այդ համակարգից, իրականում, տեղեկացված են միայն իրենց գնահատման սանդղակից:

Հետևություն 1. Ուսանողները հիմնականում տեղեկացված չեն, թե ինչ է իրենից ներկայացնում կրեդիտային համակարգը, ինչ առաքելություն ունի, որի պատճառ կարող է հանդիսանալ բուհում տեղեկատվության տարածման ուղիները: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ուսանողները կրեդիտային համակարգը շփոթում են գնահատման սանդղակի հետ, առաջինի մասին պատկերացումները ուսանողների մոտ վերագրվում են երկրորդի շոշափելի դրսևորումներին, այսինքն՝ կրեդիտային համակարգի հետ կապված ապատեղեկացվածությունը ոչ միայն պատճառ է տեղեկատվության տարածման ուղիների թերի գործառնության, այլև շոշափելի դրսևորումների գրեթե բացակայության:

Մ ա ս II. Ու ս ա ն ո ղ ն եր ի կ ար ծ ի ք ր զ ն ա հ ա տ մ ա ն հ ա մ ա կ ար գ ի վ եր ա ք եր յ ա լ

Հետազոտության հաջորդ խնդիրն էր վերհանել ուսանողների կարծիքը գնահատման համակարգի վերաբերյալ՝ գնահատման նպատակի և հիմնական սկզբունքների (1), գնահատման վրա ազդող գործոնների և փուլայնության (2), գնահատման օբյեկտիվության (3) վերաբերյալ³:


Ինչ վերաբերում է գնահատման հիմնական նպատակին, չնայած, որ ուսանողների շուրջ 44% համարում է, որ գնահատումը ծառայում է ուսանողի համար որպես զարգացման միջոց, այնուամենայնիվ, մի զգալի մաս՝ շուրջ 41%-ը գտնում է, որ դրա նպատակը ուղղակի գնահատական ստանալն է:

Ուսանողակենտրոն ուսուցման տարրերից մեկը ենթադրում է, որ գնահատումը հանդիսանում է ուսանողի համար թերությունների դուրսբերման և դրանց հիման վրա անընդհատ կատարելագործման մեխանիզմ⁴: Մինչդեռ, գնահատման համակարգը հաճախ վերածվում է ուսանողների տարբերակման, կամ պիտակավորման («լավ սովորող ուսանող», «վատ սովորող ուսանող» և այլն) միջոցի, և շատ հաճախ ուսանողները չեն պատկերացնում, որ եթե իրենք, օրինակ, 10 միավորի փոխարեն հավաքել են 8 միավոր, գործնականում դա պետք է նշանակի, ոչ թե, որ իրենք խմբում որևէ մեկի համեմատ վատ են սովորում կամ այլ ուսանողից «վատն» են, այլ այն, որ ուսանողը՝ որպես անհատ ուսումնառող սուբյեկտ, տվյալ առարկայական ծրագրի շրջանակներում կոնկրետ ուսումնառության արդյունքի հասնելու համար ունի որոշակի բացեր, որոնք պետք է լրացվեն դասախոսի հետ համագործակցաբար, դասախոսի ուղղորդմամբ:

Հաջորդ հարցը, որին կանդրադառնանք, վերաբերում է գնահատման հիմքում ընկած հիմնական սկզբունքներին, այսինքն՝ ինչի համար է ուսանողը գնահատվում: Ծայրահեղ դեպքերում գնահատումը կարող է իրականացվել դասի (շատ հաճախ՝ գրավոր դասախոսության) զուտ վերարտադրության համար, այնինչ հնարավոր է և էական գնահատումը վերլուծական, ստեղծագործական աշխատանք/ների համար:


⁴ Student-Centered Learning SCL Toolkit. 2010, էջ 31

<http://www.esu-online.org/pageassets/projects/projectarchive/100814-SCL.pdf> (Երեխեք, չեմ ջոկում հեղինակն ով է.. մի հատ նայեք)



Գծապատկեր 6. Գնահատման սկզբունքները

Շատ կարևոր է, որպեսզի դասախոսը փոխանցի ուսանողներին իր գիտելիքը և համոզվի, որ ուսանողը յուրացրել է այն: Այնուամենայնիվ, մենք առավել կարևոր ենք համարում վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացումը, քանի որ գիտելիքի միջոցով ուսանողի մտածողության զարգացումը նպաստում է, որ նա հետագայում կարողանա իրեն անհրաժեշտ գիտելիքներ ինքնուրույն ձեռք բերել և ձևավորել: Այնուամենայնիվ հայ իրականության մեջ շատ դեպքերում ուսանողները գնահատվում են դասի վերարտադրության համար (Գծապատկեր 6):



Գնահատման վրա ազդում է նաև դասախոսի անհատական կարծիքը ուսանողների վերաբերյալ, որը, ուսանողների մեծ մասի կարծիքով, ձևավորվում է ընթացիկ աշխատանքների միջոցով:


Գծապատկեր 8-ում պատկերված են դասավանդում-ուսումնառություն գործընթացի փուլերը: Դրանցից յուրաքանչյուրում կարևորվում են ուսանողի ակտիվ մասնակցությունը, առանձնահատուկ մտածելակերպը, ինքնուրույն աշխատանքը:

Գծապատկեր 8. Դասավանդում-ուսումնառություն գործընթացի փուլերը⁵



Մրանք այն փուլերն են, որոնց պետք է մասնակցեն ուսանողները ուսումնառության ընթացքում: Թե որքանով են դրանք անցկացվում բուհերում, և արդյոք ուսանողները ընթացիկ գնահատման ներքո պատկերացնում են նման կառուցվածք, հնարավոր կլինի պարզել հետագա հետազոտությունների միջոցով:

Գծապատկեր 9. Գնահատման վրա ազդող գործոնները



⁵ Տվյալ գծապատկերի հեղինակն է կրթության սոցիոլոգիայի մասնագետ, ԵՊՀ շրջանավարտ Սոնա Բալասանյանը:

Գծապատկեր 9-ում վիզուալ կերպով պատկերված է տարբեր գործոններին ուսանողների տված գնահատականները: Այստեղ տեսնում ենք «մեծապես ազդում է», «մասամբ ազդում է», «գրեթե չի ազդում» պատասխանների վարկանիշը (ռեյտինգը)՝ նշված տարբերակների մոտ՝ Անդրադառնալով «մեծապես ազդում է» պատասխանին, նկատում ենք որ այն ավելի շատ վերաբերում է հետևյալ տարբերակներին՝

1. Ուսանողի գիտելիքները (82%)
2. Գիտելիքը կիրառելու կարողությունները (78%)
3. Ինքնուրույն աշխատանքը (70%)
4. Ուսանողի ձգտումը ուսման նկատմամբ (63%)
5. Ուսանողի հաճախումները դասերին (62%)
6. Ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը (57%)

Այս պատասխանները բավականին հետաքրքիր են այն տեսանկյունից, որ առաջին 3 տարբերակները, ինչպես նաև հաճախումները այն չափանիշներն են, որոնք ենթադրվում է, որ պետք է օբյեկտիվորեն պայմանավորեն գնահատակը, մինչդեռ ուսանողի ձգտումը ուսման նկատմամբ և ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը ավելի շուտ սուբյեկտիվ բնույթ են կրում, սակայն պատասխանների բաշխման մեջ նույնպես բարձր տոկոս են կազմում:

Համեմատաբար ավելի ցածր վարկանիշ են ստացել պատասխանի հետևյալ տարբերակները՝

7. Ուսանողի ծանոթը (46%)
8. Ծնողների դիրքը (44%)
9. Կաշառքը (36%)

Սակայն, եթե հաշվի առնենք, որ այս գործոնները հանդիսանում են կոռումպաժին, ստացել են բավականին մեծ տոկոսներ՝ 36-46%:


Վերջին տեղում է՝

10. Ուսանողի արտաքին տեսքը (24%):

⁶ Բաշխումը ամբողջի մեջ (արտահայտված %-ով) կարող էք տեսնել Հավելված ???, էջ ???, Աղյուսակ 30

Բայցև «ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունք» տարբերակը մեծ տոկոս է կազմում, ուստի դժվար է հասկանալ՝ արդյոք ուսանողի արտաքին տեսքը չի ազդում այդ վերաբերմունքի վրա:

Դիտարկելով «մասամբ ազդում է» պատասխանի վարկանիշը, նկատում ենք, որ այդ պատասխանը գրեթե հավասարապես է դրսևորվում բոլոր պատասխանների մոտ:



Երբ դիտարկում ենք «գրեթե չի ազդում» պատասխանի վարկանիշը, ամենամեծ

տոկոսները հանդիպում են հետևյալ պատասխանների մոտ՝

1. Ուսանողի արտաքին տեսքը (45%)
2. Կաշառքը (41%)
3. Ծնողների դիրքը (31%)
4. Ուսանողի ծանոթը (28%)

Դիտարկելով վերոնշյալ պատասխանները նշած ուսանողների բաշխումը՝ ըստ առաջադիմության, բուհի կարգավիճակի և մարզի, և համեմատելով ընդհանուր ուսանողների հետ, նկատում ենք, որ «իդեալիստների»⁷ և ընդհանուր ուսանողների միջև գրեթե տարբերություններ չեն նկատվում, հետևաբար, խումբը կենտրոնացած չէ՝ ըստ նշվածներից որևէ չափանիշի⁸:


Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես են բուհի դասախոսների մեծ մասը իրականացնում գնահատումը, ուսանողների շուրջ 62%-ը նշել է, որ իրենց բուհի դասախոսների մեծ մասը իրականացնում է օբյեկտիվ գնահատում(Գծապատկեր 10):

Եթե ուսանողների կարծիքով դասախոսները հիմնականում օբյեկտիվորեն են գնահատում, ապա, ենթադրվում է, որ ուսանողի հանդեպ դասախոսի անձնական վերաբերմունքը պետք է գրեթե ազդեցություն չունենա վերջնական գնահատման վրա: Այնուամենայնիվ, վերը բերվեց հակառակ պատկեր:

⁷ Տարբերակման համար վերջիններիս անվանենք «իդեալիստներ»: Այս անվանումը տրվել է զուտ այն պատճառով, որ իմբի մեջ մտնող ուսանողները կարծում են, որ «ուսանողի արտաքին տեսքը», «ծանոթը», «ծնողների դիրքը» և «կաշառքը» գրեթե չեն ազդում գնահատականի վրա:

⁸ Համեմատությունը կարող էք տեսնել Հավելված 3-ում, Աղյուսակ 31. 1, 31. 2, 31. 3

Գծապատկեր 11. «Որքանով է դասախոսը օբյեկտիվորեն գնահատում» և «Որքանով է ազդում ուսանողի հանդեպ դասախոսի անձնական վերաբերմունքը վերջնական գնահատականի վրա»



Վերոնշյալ գծապատկերից անկհայտորեն երևում է, որ նույնիսկ այն ուսանողները, ովքեր կարծում են, որ դասախոսը օբյեկտիվորեն է գնահատական նշանակում, այնուամենայնիվ գտնում են, որ ուսանողի նկատմամբ վերաբերմունքը «մեծապես ազդում է» վերջնական գնահատականի վրա: Հետևաբար կարող ենք ասել, որ դասախոսի իրականացրած գնահատումը որակելով որպես «օբյեկտիվ», ուսանողները իրականում արտահայտում են իրենց դրական կամ ոչ բացասական վերաբերմունքը դասախոսի նկատմամբ:

Հետևություն 2.

- Ուսանողների համար գնահատականը չի կրում բովանդակային արժեք, այլ հանդես է գալիս որպես պիտակավորող հանգամանք:
- ՀՀ ուսանողության շրջանում գնահատման փուլայնությունը ասոցացվում է միայն վերջնական միավորի կուտակման փուլերի հետ, որոնք մեծամասամբ համապատասխանում են ֆիզիկական ներկայության, միջանկյալների և վերջնական քննությունների արդյունքում ստացած միավորների գումարին:
- Մակայն գնահատման՝ որպես պիտակի ընկալման հիմքում ընկած է նաև անորոշությունը: Տարբեր խմբային քննարկումների ժամանակ ուսանողները նշում էին, որ շատ դեպքերում չեն հասկանում, թե ինչի հիման վրա է դասախոսը նշանակում այս կամ այն գնահատականը (միավորը): Այս պատճառով հարցաթերում հարցեր ներգրավվեցին նաև այն մասին, թե ուսանողների կարծիքով «որքանով են տարբեր գործոններ ազդում վերջնական գնահատման վրա»:

- Այս պատասխանները բավականին հետաքրքիր են այն տեսանկյունից, որ առաջին 3 տարբերակները, ինչպես նաև հաճախումները այն չափանիշներն են, որոնք ենթադրվում է, որ պետք է օբյեկտիվորեն պայմանավորեն գնահատակնը, մինչդեռ Ուսանողի ձգտումը ուսման նկատմամբ և ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը ավելի շուտ սուբյեկտիվ բնույթ են կրում, սակայն պատասխանների բաշխման մեջ նույնպես բարձր տոկոս են կազմում: Առավել հատկանշական է այն, որ բավականին լուրջ ազդեցության գործոններ են համարվում նաև այնպիսի կաշառքը, ծնողների դիրքը, ծանոթը, որոնք օրենքով դատապարտվում են:
- Թեպետ ուսանողները նշում են, որ վերջնական գնահատման վրա մեծապես ազդում է դասախոսի անձնական վերաբերմունքը ուսանողի նկատմամբ, այնուամենայնիվ նրանք որակում են դասախոսի իրականացրած գնահատումը հիմնականում որպես օբյեկտիվ: Դա ավելի շուտ խոսում է ոչ այնքան գնահատման «օբյեկտիվ» լինելու, որքան դասախոսների նկատմամբ ուսանողների դրական դիրքորոշման մասին:


Մ աս III. Ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա ազդող հիմնական գործոնները

Որպեսզի կրթական համակարգը ծառայի հասարակական և շուկայական պահանջներին, ուսանողները պետք է լինեն ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ: Այդ պատճառով կարևոր է հասկանալ, թե ինչն է ազդում ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա, ինչին էլ ուղղված է երրորդ հետազոտական խնդիրը:

Այս բաժնում կանդրադառնանք մասնավորապես


- դասավանդում-ուսումնառություն գործընթացին
- դասախոսի մոտեցմանը
- դասավանդման մեթոդ/ներին
- դասավանդվող նյութ/երին
- դասախոս-ուսանող փոխհարաբերությանը
- ուսանող-ուսանող փոխհարաբերությանը
- դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսներին:

Որքան էլ որ դասավանդում-ուսումնառություն գործընթացը լինի ուսանողակենտրոն, այնուամենայնիվ մեծապես կարևորվում է դասավանդողի՝ որպես ուղղորդողի՝ դերը: Այդ պատճառով էական է հասկանալ, թե ինչպես է ընկալվում դասախոսի դերը ուսանողների կողմից: Հետազոտության ընթացքում ուսանողներին ներկայացվել են մի շարք հատկանիշներ և նրանք գնահատել են, թե որքանով են իրենք կարևորում այդ հատկանիշների առկայությունը դասախոսների մոտ և, թե որքանով են, իրենց կարծիքով, դրանք առկա: Պատասխանները ներկայացված են Գծապատկեր 12-ում:




Գծապատկեր 12-ի պատասխաններից երևում է ընդգծված դրական դիրքորոշում դասախոսների նկատմամբ: Այնուամենայնիվ, պատասխանների առավել փոքր տոկոս են կազմել «գործնական գիտելիքների մատուցումը և «ուսանողների հետ անհատական շփում հաստատելու կարողություններ» տարբերակները:

Գծապատկեր 13-ում ներկայացված է ուսանողների պատասխաններն՝ ըստ նրա, թե արդյոք նշված գործոնը դրդում է իրենց սովորել, թե՛ ոչ: Ինչպես տեսնում ենք ուսանողի սովորելու վրա առավել շատ ազդում է դասավանդման նյութը, նյութը մատուցելու մեթոդը, դասախոսի հետ ունեցած հարաբերությունները և այլն: Ավելի քիչ ազդում է լսարանի/ֆակուլտետի տեխնիկական հագեցվածությունը:



Հետաքրքիր է նաև, թե որքանով են իրականացել ուսանողների ակնկալիքները բուհ ընդունվելուց հետո (Գծապատկեր 14):


Գծապատկեր 14. Ակնկալիքների իրականացումը բուհ ընդունվելուց հետո



Ուսանողներին հարցրել ենք, թե որքանով են արդարացել իրենց ակնկալիքները ուսումնական գործընթացի տարբեր տարրերից: Գծապատկեր 14-ից երևում է, որ ուսանողների ակնկալիքները ընդհանուր առմամբ արդարացել են: Մասնավորապես արդարացել են ակնկալիքները համակուրսեցիներից, դասախոսների տրամադրած նյութից, դեկանատից/ամբիոնից, և առավել քիչ՝ մասնագիտական գրադարանից, բուհի գույքային պայմաններից, այլ ադմինիստրատիվ աշխատողներից, առարկայական ծրագրերից և այլն: Ինչպես երևում է, կա մի մեծ զանգված (24-47%), ում ակնկալիքները տարբեր տարրերից չեն իրականացել:

Ուսումնական գործընթացը դժվար է պատկերացնել առանց համապատասխան ռեսուրսների առկայության:


Գծապատկեր 15. Ստորև նշվածների առկայությունը ՀՀ բուհերում




Բուհական գործունեության շրջանակներում գործնական գիտելիք ստանալու հնարավորությունը մեծապես կապվում է ուսանողների համար մատչելի լաբորատորիաների հետ: Ուսանողների շուրջ 67%-ը նշել է, որ իրենց բուհում գրեթե առկա չէ ուսանողների համար մատչելի լաբորատորիա: Դասավանդում-ուսումնառություն գործընթացի կայացման անհրաժեշտ նախապայման է հանդիսանում նաև մասնագիտական գրադարանի առկայությունը, որը չի սահմանափակվում միայն դասախոսի տրամադրած գրականության ցանկով, այլ ուսանողը ազատ կարող է լինել միննույն թեմայի վերաբերյալ տարբեր հեղինակների աշխատանքներին ծանոթանալ և կողմնորոշվել մասնագիտական հեղինակների ընտրության հարցում: Ինչպես երևում է Գծապատկեր 15-ից, ուսանողների շուրջ 60%-ը նշել է, որ իրենց մոտ գրեթե առկա չէ հարուստ մասնագիտական գրադարան, 21%-ը՝ մասամբ առկա է, և միայն 20%-ն է նշել «լիովին առկա է» պատասխանը:

Այն դեպքում, երբ բուհի գրադարանը հագեցած չէ անհրաժեշտ գրականությամբ կամ պարզապես ուսանողին ավելի հարմար է աշխատել նյութի էլեկտրոնային տարբերակի հետ, առաջ է գալիս ինտերնետի անհրաժեշտություն: Այն հարցին, թե ինչպես կգնահատեն իրենց բուհում անվճար ինտերնետի առկայությունը, ուսանողների շուրջ 66%-ը նշել է, որ գրեթե առկա չէ: Այսպիսով, ուսանողները գրկված են բուհի շրջանակներում համացանցում որևէ գործունեություն ծավալելու հնարավորությունից, եթե իհարկե ուսանողը չունի վճարովի ինտերնետի սեփական միջոցներ:


Հետազոտությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ ուսանողները դրական դիրքորոշում ունեն իրենց դասախոսների նկատմամբ: Այդ հանգամանքը արտացոլված է նաև այստեղ. ուսանողների մեծամասնությունը նշել է, որ իրենց բուհում առկա դասախոսական կազմը բավականին որակյալ է, 18%-ը նշել է, որ մասամբ առկա չէ, և ուսանողների ընդամենը 4%-ն է նշել «ընդհանրապես առկա չէ» պատասխանը:




Հարցմանը մասնակցած ուսանողների շուրջ 65%-ը նշել է, որ իրենց բուհերում գրեթե բացակայում է արտասահմանյան բուհերի հետ համագործակցությունը, շուրջ 21%-ը նշել է «մասամբ է առկա» պատասխանը, և միայն 14%-ն է նշել, որ համագործակցությունը տեղի է ունենում (Գծապատկեր 16): Սակայն, եթե բուհում կրեդիտային համակարգի գործածությունը ծառայում է իր բուն նպատակին (այն է՝ շարժունություն և փոխճանաչելիություն ապահովել), ուսանողները պետք է նկատած լինեն արտասահմանյան բուհերի հետ համագործակցությունը: Հակառակ իրավիճակը խոսում է այն մասին, որ ուսանողները տեղեկացված չեն, թե ինչպես է կրեդիտային համակարգը գործում կամ բուհում իրոք բացակայում է համագործակցությունը արտասահմանյան բուհերի հետ:



Գծապատկեր 17-ից երևում է, որ այն պարագայում, երբ ֆակուլտետում ուսանողների համար հասանելի են համակարգիչներ, print, scan և xerox, ուսանողների մեծ մասը նշել է, որ իրենք դրանից մոտիվացվում են սովորել, սակայն շուրջ 26%-ը նշել է, որ տեխնիկական հագեցվածությունը չի անդրադառնում իրենց սովորելու մոտիվացիայի վրա: Իսկ այն դեպքում, երբ ուսանողները նշել են, որ ֆակուլտետը տեխնիկապես այդքան էլ հագեցած չէ, ուսանողների շուրջ 48%-ը նշել է, որ իրենց սովորելուն դա չի նպաստում:



Հետազոտության ժամանակ անդրադարձանք նաև ուսանողների սովորելու ցանկության նվազման պատճառներին: Այն հարցին, թե «ինչն է եղել սովորելու ցանկության նվազման պատճառը», ուսանողները պատասխանել են (տե՛ս Գծապատկեր 19).



Ինչպես նկատում ենք, սովորելու ցանկության վրա առավել շատ ազդում է գնահատման համակարգը, ինչը արտահայտված է «րասախոսի սուբյեկտիվ գնահատումը» և «ինձ նշանակած գնահատականը լիովին չի արտահայտում իմ գիտելիքները» պատասխանների տեսքով: Ինչպես նաև մեծ նշանակություն ունի ուսանողի համակուրսեցիների վերաբերմունքը սովորելու նկատմամբ:

Հետևություն 3.


- Ուսանողները դասավանդում-ուսումնառություն գործընթացում առավել շատ կարիք ունեն գործնական գիտելիքների, ինչպես նաև անհատական ուշադրության և ուղղորդման:
- Շատ դեպքերում բուհի սահմաններում ուսանողները ապահովված չեն ուսումնառությանը անհրաժեշտ լաբորատոր պայմաններով, հարուստ մասնագիտական գրականությամբ, ինտերնետով:
- Գնահատումը և գնահատականը այն հիմնական գործոններն են, որոնք ազդում են ուսանողների սովորելու ցանկության նվազման վրա:

Մաս IV. Դասավանդ ուսումնամատում գործընթացը՝ ուսանողների աչքերով

Վերլուծության նախորդ բաժնում նշված էին ուսանողների սովորելու ցանկության վրա ազդող մի շարք գործոններ: Այժմ անդրադառնանք դասավանդում-ուսումնառության գործընթացի տարբեր տարրերի՝ ուսանողների բավարարվածության հարցին՝ անդրադառնալով այնպիսի ասպեկտներին, ինչպիսիք են՝


- Դասավանդման մեթոդը (գրավոր դասախոսություն-քննարկում հակադրությամբ),
- Նյութի արդիականությունը,
- Ուսանողի մասնակցությունը դասին,
- Ուսանող-ուսանող համագործակցությունը,
- Ուսանող-դասախոս համագործակցությունը և գիտելիքի կառուցմանը:

Ուսանողների շուրջ 87%-ը նշել, որ դասախոսի նյութը մատուցելու մեթոդը ինչ-որ չափով կամ բավականին անդրադառնում է իրենց սովորելու մոտիվացիայի վրա (Գծապատկեր 20): Յուրաքանչյուրս մեր օրինակից ելնուով կընդունենք, որ կախված նրանից՝ ըմբռնելի են մեզ որևէ թեմայի մասին պատմում թե ոչ, մենք կլսենք պատմածը մինչև վերջ ամենայն ուշադրությամբ կամ կշեղվենք դասից տարբեր մտքերով/գործողություններով:




Նմանատիպ իրավիճակի մենք հանդիպում ենք ուսումնական գործընթացում:

Գծապատկեր 21-ում ներկայացվում է 6 մեթոդների կիրառության հաճախականությունը (թե ուսանողների որ մասն է նշել, որ իրենց մոտ սովյալ մեթոդը հաճախ է օգտագործվում) և արդյունավետությունը (ուսանողների որ մասն է արդյունավետ համարում սովյալ մեթոդն իր համար):




Ինչպես տեսնում ենք առավել քիչ օգտագործվող մեթոդը դերային խաղն է, սակայն այն գրեթե կրկնակի մեծ թվով ուսանողների կողմից արդյունավետ է համարվում: Տեսնում ենք



նաև, որ մյուս մեթոդներն էլ, բացառությամբ գրավոր դասախոսության, ավելի շատ արդյունավետ են համարվում, քան կիրառվում են: Ինչ վերաբերում է գրավոր դասախոսության, միակ մեթոդն է, որ շատ է օգտագործվում, սակայն կա ուսանողների ինչ-

որ զանգված, ում համար տվյալ մեթոդը արդյունավետ չէ: Դիտարկենք ավելի մանրամասն:

Այն հարցին, թե որ ծայրահեղ տարբերակն է առավել բնութագրական իրենց բուհում տիրող իրավիճակի համար⁹, ուսանողների շուրջ 50%-ը պատասխանել է, որ գերակշռում է գրավոր դասախոսությունը (Գծապատկեր 23):



«Եթե լեկցիա չգրենք, վերջում ինչով ենք պատասխանելու քննությունը», - հաճախ նշում էին հարցված ուսանողները:


Բայց չէ որ ուսանողակենտրոն ուսուցման հիմնական նպատակն է ուսանողներին ինքնուրույնության դրդելը: Այս պարագայում նկատվում է մի իրողություն, որ ուսանողները

⁹ Ծայրահեղ բևեռների դերում հաղես են եկել՝ «Ուսանողը դասի ժամանակ ՄԻԱՅՆ լսում է դասը և գրում լեկցիա» և «Ուսանողը դասի ժամանակ ՄԻԱՅՆ լսում է դասը և գրում լեկցիա» դատողությունները

կառչում են դասախոսի թելադրած տեքստին և այն օգտագործում են զուտ քննությանը պատասխանելու և գնահատական ստանալու նպատակով:

Հիշենք, որ ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա մեծապես ազդում էր նաև մատուցվող նյութի բովանդակությունն ու

արդիականությունը: Ինչ վերաբերում է տրամադրվող նյութի արդիականությանը, հարցվողների շուրջ 30%-ը նշել է, որ իրենց դասախոսների տրամադրած նյութը




հնացած, ոչ կիրառական է (Գծապատկեր 24): Խնդիրը մասամբ առկա է նաև ուսանողների 16%-ի մոտ: Հետաքրքիր է, որ 56%-ը գտնում է, որ իրենց տրամադրված նյութը արդիական և կիրառելի է:


Տվյալ հարցը համադրենք այն հարցի հետ, թե հնարավորության դեպքում ուսանողը որ տարբերակը կնախընտրեր՝

1. Ծրագրով նախատեսվածից ավելի կարճ ժամանակում դիպլոմ ստանալ
2. Ծրագրով նախատեսվածից ավելի շատ տեսական գիտելիքներ ստանալ
3. Ծրագրով նախատեսվածից ավելի շատ պրակտիկ գիտելիքներ ստանալ


Հարցի մեջ նաև տրվել է «Այլ» և «Ծրագրով նախատեսված ժամանակը բավարար է» պատասխանի տարբերակների հնարավորությունը:



Համադրելով՝ ստանում ենք հետևյալ պատկերը՝




Գծապատկեր 26-ից նկատում ենք, որ այն ուսանողները, ովքեր կնախընտրեին նախատեսվածից ավելի կարճ ժամանակահատվածում դիպլոմ ստանալ, հիմնականում գտնում են, որ դասավանդվող նյութը հնացած է: Իսկ այն ուսանողները, ովքեր ցանկանում են ծրագրով նախատեսվածից ավելի շատ տեսական կամ պրակտիկ գիտելիներ ձեռք բերել, բավարարված են դասավանդվող նյութի արդիականությամբ: Այսպիսով, հետաքրքիր է՝ արդյոք ուսանողները բուհ են հաճախում դիպլոմ ստանալու համար և անտարբեր են դասավանդվող նյութի հանդեպ, թե մատուցված նյութի արդիականությունից են դժգոհ և այդ պատճառով են սովորում դիպլոմի համար: Այս հարցը դիտարկենք ուսանողի՝ դասապրոցեսին ներգրավվածության լույսի ներքո:



Վերոնշյալ գծապատկերում պատկերված է մի իրականություն, որը կարող է երևալ միայն ուսանողի աչքերով: Իհարկե, ցանկացած առարկայի, մասնագիտության շրջանակներում կան շատ հիմնական գիտելիքներ, որոնք ուսանողը պետք է «ջրի պես» իմանա առաջ քայլելու համար, սակայն նաև գաղտնիք չէ, որ առհասարակ մարդու մոտիվացիան առավել բարձր է, երբ իրեն ներգրավված է զգում գործընթացում:


Նույն իրավիճակը առկա է նաև ուսումնական գործընթացում: Գուցե շատերը չհամաձայնեն մեզ հետ, սակայն տվյալներից երևում է, որ երբ «դասախոսը իր տեսանկյունն ու գիտելիքները պարտադրում է ուսանողներին», նրանք պասիվ մասնակցություն են ցուցաբերում դասի ժամանակ և ապահովում են զուտ ֆիզիկական ներկայություն:

Գաղտնիք չէ նաև, որ ուսումնական գործընթացի վրա մեծ ազդեցություն ունի ուսումնական միջավայրը, որի անբաժան մասը կազմում են համակուրսեցիները: Խմբային քննարկումների ժամանակ ուսանողները բազմիցս նշել են, որ այժմյան գնահատման համակարգը ստեղծում է մրցակցություն ուսանողների միջև և հեռացնում է նրանց միմյանցից, ինչը երևում է նաև Գծապատկեր 28-ում:



Երբ հարցը վերաբերում է իրենց համակուրսեցիներին, ուսանողները դրական են արտահայտվում նրանց մասին, սակայն երբ արդեն հարցը վերաբերում է ընդհանուր ուսանողությանը, ուսանողները ավելի շատ են իրենց տարբերում ընդհանուրից: Այն հարցին, թե «ինչու՞ եք բուհ ընդունվել», ուսանողները հիմնականում նշել են «լավ

մասնագետ դառնալու համար», «մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար», «քանի որ համալսարանը վստահելի է», իսկ այն հարցին, թե «ինչու են մյուս ուսանողները ընդունվում բուհ» առավել հաճախ նշված պատասխաններն են եղել՝ «ղիպլում ստանալու համար», «ծնողների ցանկությամբ», «քանի որ մոդայիկ է» (քանի որ ընկերները ընդունվում են բուհ, իրենք էլ են ընդունվում) և այլն:




Անկախ նրանից՝ արդյոք ուսանողները արտահայտել են իրենց իրական կարծիքը, թե առկա է սեփական պատճառները ուրիշների անվան ներքո արտահայտելու փորձ, այնուամենայնիվ նկատվում է լուրջ հակասություն մենք-նրանք հարաբերակցության մեջ: Այսինքն, ուսանողությունը, որպես ամբողջական միավոր, ուսանողների գիտակցության մեջ հանդես է գալիս ոչ թե սովորելուն, մասնագետ դառնալուն միտումներ ունեցող գիտակցող սուբյեկտ, այլ սեփական կարծիք չունեցող (ծնողների ցանկությամբ են ընդունվում բուհ և քանի որ բոլորն են ընդունվում) սուբյեկտ, որի հիմնական նպատակն է ղիպլում ստանալ:

Մինչդեռ գրեթե յուրաքանչյուր ուսանող իր բուհ ընդունվելը հիմնավորում է մասնագետ դառնալու ցանկությամբ: Այս դեպքում մենք գուցե գործ ունենք իրականության երկու կողմի բացահայտման հետ. նշվել են և՛ իրավիճակային, և՛ վերջնական նպատակները: Այսինքն՝ այստեղ նշվել են ոչ այնքան ընդունվելու պատճառները, որքան ուսանողների ցանկությունը (տեսլականը՝ այս դեպքում մասնագետ դառնալը) և տվյալ իրավիճակից հիմնական սպասելիքը՝ ղիպլումը:

Այն հարցին, թե «Հնարավորության դեպքում ինչը կփոխեիք Ձեր բուհում», ստացել ենք պատասխանների հետևյալ պատկերը

Գծապատկեր 30.Ի՞նչ բնույթի փոփոխություններ կցանկանայիք իրականացնել Ձեր բուհում



Գծապատկերից երևում է, որ մեծ տոկոս է կազմում «տեխնիկական բնույթի թարմացումներ/լաբորատորիայի զարգացում» պատասխանը: Սա մատնանշում է պրակտիկ գործունեության կարիք, ինչն արտահայտվում է նաև «գործնական գիտելիքի տրամադրում և պրակտիկայի ավելացում» պատասխանում:

Հետևություն 4.

- Գրավոր դասախոսության մեթոդը, լինելով առավել օգտագործվողը, նպաստում է ուսանողների օտարմանը ինքնուրույնությունից և հոգեբանական կախվածության մեջ է դնում նախապես ունեցած գրառումներից (գրավոր դասախոսությունից):
- Երբ դասավանդվող նյութը հնացած է, գործնականում՝ ոչ կիրառելի, և պարտադրվում է ուսանողներին, վերջիններս ցուցաբերում են ցածր մասնակցություն դասին և ավելի շուտ հակված են ապահովելու ֆիզիկական ներկայություն: Այնինչ, ուսանողները դասի ժամանակ ակտիվ մասնակցում են քննարկմանը, երբ նյութը կիրառական և արդիական է, և ուսանողն ու դասախոսը համագործակցաբար են աշխատում:
- Ուսանողներն ընդունվում են բուհ սովորելու, մասնագետ դառնալու ցանկությամբ, սակայն ընդունվելուց հետո հայտնվում են մի իրավիճակում, որտեղ գրավոր դասախոսությունը դառնում է գնահատական ստանալու միջոց: Դասախոսների կողմից հաճախ չեն ստանում անհատական մոտեցում, չեն ապահովվում անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ և լաբորատոր/հետազոտական

հնարավորություններով, և գրեթե բացակայում են գործնական գիտելիքներ: Նման միջավայրը նպաստում է, որպեսզի ուսանողների սովորելու մոտիվացիան նվազի և նրանք սկսեն սովորել դիպլոմ ստանալու համար:



Հ ա վ ե լ վ ա ծ 1 Հ ա ր ց ա թ ե ր թ



Հարգելի հարցվող,

«Students' Voice»-ը ուսանողական նախաձեռնություն է, որի նպատակն է վերհանել ուսանողների խնդիրները կրթության ոլորտում: Իրականացվող սոցիոլոգիական հետազոտությունը ուսանողակենտրոն ուսուցման վերաբերյալ է: Խնդրում ենք հնարավորինս մանրամասնորեն և անկեղծորեն պատասխանել հարցերին: Հետազոտության որակը կախված է Ձե՛՛հ պատասխաններից: Հետազոտությունը անանուն է: Տվյալները վերլուծվելու են ընդհանրացված տեսքով:

Ն ջ ե ք 2 ե ր`

Q1. Բուհը	Q2. Ֆակուլտետը	Q3. Կուրսը	Q4. Սեռը
		1. I	1. Արական
		2. II	2. Իգական
		3. III	
		4. IV	
		5. Մագ I	
		6. Մագ II	

Q5. Ձեր բուհը`

1. պետական է
2. միջպետական է
3. մասնավոր է

Q6. Ուսման մեջ առաջադիմությունը` ըստ Ձեր ստացած գնահատականների

1. բավարար
2. լավ
3. գերազանց

Q7. Ինչու եք որոշել բարձրագույն կրթություն ստանալ: Նշեք ամենակարևոր երեք պատճառները

Q8. Իսկ ինչու են հայ երիտասարդները ընդհանրապես ընդունվում բուհ: Նշեք ամենակարևոր երեք պատճառներ:

	Q7.	Q8.
1. Լավ մասնագետ դառնալու համար	1	1
2. Մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար	2	2
3. ՀՀ-ում բարձրագույն կրթությունը վստահելի է և որակյալ	3	3
4. Տվյալ բուհում սովորելը հնարավորություն է տալիս հետագայում մասնագիտությամբ աշխատանք գտնել	4	4
5. Երբ բոլոր ընկերների բուհ են ընդունվում, դու էլ էլ պետք է ընդունվես	5	5
6. Ծնողների ցանկությամբ	6	6
7. Դիպլոմ ստանալու համար	7	7
8. Բանակից խուսափելու համար	8	8
9. Նոր ծանոթություններ ձեռք բերելու համար	9	9
10. Այլ(մանրամասնեք)	10	10

Q9. Ձեր բուհում ներդրված է կրեդիտային համակարգ:

Q10. Ձեր կարծիքով ճի՞շտ որոշում էր անցնել կրեդիտային համակարգի:

1. այո
2. ոչ

1. Այո
2. Ոչ
3. Տարբերություն չեմ տեսնում

Նշեք կրեդիտային համակարգի՝

Q10. 1. Դրական կողմերը	Q10. 2. Բացասական կողմերը
1.	1.
2.	2.

Q11. Իսկ ի՞նչ է Ձեր կարծիքով կրեդիտային համակարգը

1.

2.

Q12. Որքանով եք դուք բավարարված բուհում Ձեզ տրամադրվող տեղեկատվությամբ: Գնահատեք 0-4 բալանոց սանդղակով, որտեղ 0=նշված հարցի վերաբերյալ տեղեկատվություն չեմ ստանում; 1=ընդհանրապես բավարարված չեմ, 4=լիովին բավարարված եմ:

	Q12. բավարարվածություն				
	0	1	2	3	4
1. Ձեզ դասավանդվող յուրաքանչյուր առարկայի նկարագրությունը	0	1	2	3	4
2. Գնահատման չափանիշները և ընթացակարգերը յուր. առարկայի համար	0	1	2	3	4
3. Ուսանողի իրավունքների և պարտականությունների մասին	0	1	2	3	4
4. Կրեդիտներ հավաքելու պայմանների մասին	0	1	2	3	4
5. Կրեդիտների օգտագործման մասին (կուտակման, փոխանցման մասին)	0	1	2	3	4
6. Արտասահմանում ուսումը շարունակելու հնարավորությունների մասին	0	1	2	3	4
7. Բուհից բուհ տեղափոխվելու մասին	0	1	2	3	4
8. Ֆակուլտետից ֆակուլտետ տեղափոխվելու մասին	0	1	2	3	4
9. Այլ(մանրամասնեք)	0	1	2	3	4

Q13. Ինչպե՞ս են Ձեր բուհի դասախոսները գնահատում ուսանողներին:

1. Լիովին սուբյեկտիվ
2. Ավելի շուտ սուբյեկտիվ
3. Ավելի շուտ օբյեկտիվ
4. Լիովին օբյեկտիվ

Q14. Ձեր կարծիքով որքանով է վերջնական գնահատականի վրա ազդում՝

Գնահատման վրա ազդող գործոնները	1=ընդհանրապես կարևոր չէ, 10=շատ կարևոր է:									
1. Ուսանողի գիտելիքները	1	2	3	4	5	6	7	8	9	10
2. Գիտելիքը կիրառելու կարողությունները	1	2	3	4	5	6	7	8	9	10
3. Ինքնուրույն աշխատանքը	1	2	3	4	5	6	7	8	9	10
4. Ուսանողի ձգտումը ուսման նկատմամբ	1	2	3	4	5	6	7	8	9	10
5. Ուսանողի պահվածքը/վարքը դասի ժամանակ	1	2	3	4	5	6	7	8	9	10
6. Ուսանողի հաճախումները դասերին	1	2	3	4	5	6	7	8	9	10
7. Ուսանողի նկատմամբ դասախոսի անձնական վերաբերմունքը	1	2	3	4	5	6	7	8	9	10
8. Ուսանողի արտաքին տեսքը	1	2	3	4	5	6	7	8	9	10
9. Ուսանողի ծանոթը	1	2	3	4	5	6	7	8	9	10
10. Ծնողների դիրքը	1	2	3	4	5	6	7	8	9	10
11. Կաշառքը	1	2	3	4	5	6	7	8	9	10
12. Այլ (մանրամասնել)՝	1	2	3	4	5	6	7	8	9	10

Q15. Յուրաքանչյուր տողի աջ և ձախ կողմերում նշված տարբերակներից որին է ավելի մոտ այն իրավիճակը, որն առկա է Ձեր դասընթացների ժամանակ:

1. Ուսանողը դասի ժամանակ ՄԻԱՅՆ լսում է դասը և գրում լեկցիա	-3	-2	-1	0	1	2	3	1. Ուսանողը նախօրոք պատրաստ գալիս է դասին և քննարկումների արդյունքում է եզրահանգումներ անում
2. Ուսանողը դասի ժամանակ ցուցաբերում է ՄԻԱՅՆ ֆիզիկական ներկայություն	-3	-2	-1	0	1	2	3	2. Ուսանողը դասի ժամանակ ակտիվ մասնակցում է քննարկվող հարցին
3. Դասավանդվող նյութը հնացած է՝ գործնականում ոչ կիրառելի	-3	-2	-1	0	1	2	3	3. Դասավանդվող նյութը կիրառական է գործնականում և արդիական այսօր
4. Դասախոսը միայն տեղեկատվություն է փոխանցում	-3	-2	-1	0	1	2	3	4. Դասախոսը ուղղորդում է և խրախուսում ուսանողին սովորել նաև ինքնուրույն
5. Ուսանողը գնահատվում է դասի վերարտադրության համար	-3	-2	-1	0	1	2	3	5. Ուսանողը գնահատվում է վերլուծական, ստեղծագործական աշխատանքի համար
6. Գնահատումը հանդես է գալիս որպես միայն գնահատական ստանալու միջոց	-3	-2	-1	0	1	2	3	6. Գնահատումը ուսանողի համար թույլ կողմերը պարզելու, գիտելիքի և կարողությունների ձևավորման միջոց է
7. Գնահատումը դասախոսի համար ուսանողին <u>վերահսկելու</u> միջոց է	-3	-2	-1	0	1	2	3	7. Գնահատումը դասախոսի համար ուսանողի մոտ <u>գի տե լի ք ձևավորելու</u> միջոց է
8. Դասախոսի կարծիքը ուսանողի գիտելիքների և կարողությունների մասին ստեղծվում է ՄԻԱՅՆ քննությունների ժամանակ	-3	-2	-1	0	1	2	3	8. Դասախոսի կարծիքը ձևավորվում է ուսումնական գործընթացում ընթացիկ աշխատանքների ժամանակ
9. Դասավանդման և ուսումնառության մեթոդների պատճառով ուսանողները <u>մե կուսա ցվ ա ծ են</u> միմյանցից	-3	-2	-1	0	1	2	3	9. Դասավանդման և ուսումնառության մեթոդների շնորհիվ լսարանում ուսանողները <u>համագործակցում են</u>
10. Դասախոսը իր գիտելիքները և տեսանկյունը պարտադրում է ուսանողին	-3	-2	-1	0	1	2	3	10. Դասախոսը և ուսանողը միասին համագործակցում են

Գնահատեք, թե ստորև նշված մեթոդները որքան հաճախ են օգտագործվում ձեր դասախոսների

կողմից (Q16) և որքանով են արդյունավետ ձեզ համար (Q17): Գնահատեք 1-4 բալանոց սանդղակով, որտեղ 1= ընդհանրապես չի օգտագործում/արդյունավետ չէ, 4=շատ հաճախ է օգտագործվում/շատ արդյունավետ է:

Մեթոդները	Q16. Հաճախություն				Q17. Արդյունավետություն			
	1	2	3	4	1	2	3	4
1. Գրավոր դասախոսություն (լեկցիա)	1	2	3	4	1	2	3	4
2. Քննարկումներ	1	2	3	4	1	2	3	4
3. Դերային խաղ	1	2	3	4	1	2	3	4
4. Դեպքի ուսումնասիրություն	1	2	3	4	1	2	3	4
5. Խմբային/թիմային աշխատանք	1	2	3	4	1	2	3	4
6. Ուսանողի հնքնություն աշխատանքը	1	2	3	4	1	2	3	4
7. Այլ(մանրամասներ)	1	2	3	4	1	2	3	4

Q18. Եթե դուք հնարավորություն ունենայիք ընտրելու ստորև նշված տարբերակներից մեկը, ապա որը կընտրեիք և ինչու: Նշեք մեկ պատասխան և մանրամասներ միայն այդ պատասխանը:

1. Հնարավորություն	2. Ինչու՞
1. Ծրագրով նախատեսվածից ավելի կարճ ժամանակում դիպլոմ ստանալ	
2. Ծրագրով նախատեսվածից ավելի շատ տեսական գիտելիքներ ստանալ	
3. Ծրագրով նախատեսվածից ավելի շատ պրակտիկ գիտելիքներ ստանալ	
4. Այլ (մանրամասներ)	
99. Ծրագրով նախատեսված ժամանակը բավարար է	

Գնահատեք, թե ձեզ համար որքանով է ԿԱՐԵՎՈՐ ստորև նշված չափանիշներից յուրաքանչյուրի առկայությունը Ձեր դասախոսի մոտ ընդհանուր առմամբ (Q19) և որքանով է ԱՌԿԱ այդ չափանիշներից յուրաքանչյուրը Ձեր դասախոսների մեծ մասնում (Q20): Գնահատեք 1-4 բալանոց սանդղակով, որտեղ 1=ընդհանրապես կարևոր չէ/ ընդհանրապես առկա չէ, 4=շատ կարևոր է/լիովին առկա է:

Չափանիշներ	Q19. Կարևորությունը Ձեզ համար				Q20. Առկայությունը դասախոսների մոտ			
	1	2	3	4	1	2	3	4
1. Տեսական գիտելիքների պարզ մատուցում	1	2	3	4	1	2	3	4
2. Պրակտիկ գիտելիքների մատուցումը գործնականում	1	2	3	4	1	2	3	4
3. Ուսման մեջ ուղղորդելու, խորհուրդ տալու կարողություն	1	2	3	4	1	2	3	4
4. Մասնագիտական հեղինակությունը բուհում	1	2	3	4	1	2	3	4
5. Ուսանողների հետ անհատական շփում հաստատելու կարողություններ	1	2	3	4	1	2	3	4
6. Այլ (մանրամասներ)	1	2	3	4	1	2	3	4

Q21. Ստորև նշված գործոններից յուրաքանչյուրը որքանո՞վ է նպաստում Ձեր սովորելուն:

Գնահատեք 1-4 բալանոց սանդղակով, որտեղ՝ 1=ընդհանրապես չի դրդում, 4=մեծապես դրդում է	1-4 բալ. սանդղակ			
	1	2	3	4
1. Դասախոսի մատուցած նյութի բովանդակությունը և արդիականությունը	1	2	3	4
2. Դասախոսի՝ նյութը մատուցելու մեթոդը/ները	1	2	3	4
3. Դասախոսի վերաբերմունքը ուսանողի նկատմամբ՝ ուսման ընթացքում	1	2	3	4
4. Դասախոսի վերաբերմունքը անձամբ Ձեր նկատմամբ	1	2	3	4
5. Դասախոսի անձնային-մարդկային որակները	1	2	3	4
6. Դասախոսի կողմից գնահատելու մոտեցումները	1	2	3	4
7. Ձեր խմբի ուսանողների հետ հարաբերությունները	1	2	3	4
8. Լսարանի գույքային հագեցվածությունը(գրատախտակ, սեղան, աթոռ և այլն)	1	2	3	4
9. Ֆակուլտետի տեխնիկական հագեցվածությունը (ուսանողներին հասանելի համակարգիչներ, պրինտի, սկանի և xerox-ի հնարավորություն)	1	2	3	4
10. Այլ(մանրամասներ)	1	2	3	4

Q22. Բուհ ընդունվելուց հետո ինչ տեղի ունեցավ Ձեր սովորելու ցանկության հետ (Նշել մեկ պատասխան):

1. Սովորելու ցանկությունը զգալիորեն նվազեց(Անցում Q23-ին)
2. Սովորելու ցանկությունը քիչ թե շատ նվազեց(Անցում Q23-ին)
3. Ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ (Անցում Q23-ին)
4. Սովորելու ցանկությունը քիչ թե շատ մեծացավ (Անցում Q25-ին)
5. Սովորելու ցանկությունը զգալիորեն մեծացավ (Անցում Q25-ին)

Q23. Ո՞րն էր սովորելու ցանկության նվազման պատճառը. (Նշեք բոլոր հնարավոր պատասխանները)

1. Դասախոսների սուբյեկտիվ գնահատումը
2. Կուրսի ուսանողների իմիջիայլոց վերաբերմունքը սովորելու նկատմամբ
3. Ինձ նշանակած գնահատականը լիովին չի արտահայտում իմ գիտելիքները
4. Անիմաստ է լավ սովորելը, քանի որ առանց փողի-ծանոթի չեն նշանակում բարձր գնահատական
5. Ձուգահեռ աշխատում եմ, չեմ հասցնում
6. Այլ_____

Q24. Որ կուրսում է նվազել Ձեր սովորելու ցանկությունը՝

1	2	3	4	Մագ 1	Մագ 2
---	---	---	---	-------	-------

Q25. Ներկայումս որքանով են արդարացել Ձեր սպասելիքները ստորև նշվածներից բուհ ընդունվելուց հետո. գնահատեք 1-4 բալանոց սանդղակով, որտեղ 1=ընդհանրապես չեն արդարացել, 4=լիովին արդարացել են:

Ակնկալիքները	1-4 բալ. սանդղակ			
	1	2	3	4
1. Դասախոսների կողմից մատուցված նյութից (բովանդակության և արդիականության տեսանկյունից)	1	2	3	4
2. Դասավանդման մեթոդներից	1	2	3	4
3. Առարկայական ծրագրերից	1	2	3	4
4. Բուհի գույքային պայմաններից	1	2	3	4
5. Մասնագիտական գրադարանից	1	2	3	4
6. Դասախոսի կողմից տրամադրված նյութերից, գրականությունից	1	2	3	4
7. Համակուրսեցիներից	1	2	3	4
8. Դեկանատից/ամբիոնից	1	2	3	4
9. Բուհի այլ ադմինիստրատիվ աշխատողներից	1	2	3	4
10. Այլ(մանրամասնեք)	1	2	3	4

Q26. Որքանով են ստորև նշվածները առկա Ձեր բուհում: Գնահատեք 1-4 բալանոց սանդղակով, որտեղ 1=ընդհանրապես առկա չէ, 4=լիովին առկա է:

	1 2 3 4			
	1	2	3	4
1. Ուսանողներին մատչելի լաբորատորիա (հետազոտական հնարավորություններ)	1	2	3	4
2. Հարուստ մասնագիտական գրադարան	1	2	3	4
3. Որակյալ դասախոսական կազմ	1	2	3	4
4. Կիրառելի գրականություն	1	2	3	4
5. Անվճար ինտերնետի հասանելիություն	1	2	3	4
6. Բուհի գույքային հագեցվածություն (գրատախտակ, սեղան, աթոռ...)	1	2	3	4
7. Բուհի նյութատեխնիկական հագեցվածություն (ուսանողներին հասանելի համակարգիչներ, print-ի, scan-ի և Xerox-ի հնարավորություն...)	1	2	3	4
8. Համագործակցություն արտասահմանյան բուհերի հետ	1	2	3	4
9. Այլ(մանրամասնեք)	1	2	3	4

Q27. Ի՞նչ բնույթի փոփոխություններ կցանկանայիք իրականացնել Ձեր բուհում: 1.
2.
3.

Q28. Ինչպես է Ձեր բուհը/բուհի ադմինիստրատիվ աշխատակազմը հաշվի առնում ուսանողի կարծիքը բուհում տարվող այս կամ այն աշխատանքների վերաբերյալ (նշել բոլոր հնարավոր պատասխանները):

1. Անձամբ հարց են ուղղում ուսանողին (Անցում Q29. 1. -ին)
2. Հարցման միջոցով(Անցում Q29. 1. -ին)
3. Ուսանողը ինքն է իր խոսքը տեղ հասցնում(Անցում Q29. 1. -ին)
4. Ուսանողի կարծիքը բուհում չեն հարցնում/լսում
5. Այլ(մանրամասնեք)

Ստորև նշված թեմաներից որո՞նց վերաբերյալ են Ձեր կարծիքը հարցրել բուհում (Q29. 1) և Ձեր նշած այդ տ արբերակ ներից որի հետ կապված փոփոխություններ եք նկատել բուհում (Q29. 2):

	Q29. 1	Q29. 2
Առարկայական ծրագրերի արդյունավետությունը	1	1
Դասընթացների կազմակերպման որակը	2	2
Գնահատման օբյեկտիվությունը	3	3
Գնահատման արդյունավետությունը ուսանողի համար	4	4
